ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք.Ապարան 06 ապրիլի 2022թ. ժ.11:00

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ Ապարան համայնքի ղեկավար՝ Կարեն Եղիազարյանը:
ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ Ապարան համայնքի ավագանու 21 անդամներից 19-ը՝ Կարեն Մերուժանի Եղիազարյանը, Արկադի Գալուստի Կարապետյանը, Գոռ Հովհաննեսի Պետրոսյանը, Խաչիկ Գեղամյանը, Վահան Կամոյի Մակարյանը, Կարեն Դավիթի Կարապետյանը, Դավիթ Ռուբիկի Ենոքյանը, Արթուր Վանիկի Խալաթյանը, Աղաբեկ Սնակի Մանուկյանը, Արարատ Ավդալյանը, Հովհաննես Գալուստի Սահակյանը, Աղվան Երեմյանը, և Հայկ Սեդրակյանը, Վարդան Մխիթարյանը, Սնակ Աշոտի Սաֆարյանը, Արթուր Ժորայի Փարվանյանը, Արշակ Սուրենի Սարգսյանը, Սուրեն Սլավիկի Սարգսյանը, Արտյոմ Կարապետյանը:

ՆԻՍՏԻՑ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ ԷԻՆ՝ ավագանու անդամներ՝ Արամ Ասատրյանը և Արտյոմ Դավթյանը /ՔՊ կուսակցություն/:
Ավագանու նիստին ներկա էին զեկուցող՝ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հրայր Մկրտչյանը, **«ԱԳԲԱ» ԲԱՆԿԻ ՓԲԸ Ապարանի մասնաճյուղի կառավարիչ՝ Արմեն Ղազարյանը և** առցանց հեռարձակումն ապահովում էր առաջատար մասնագետ Մարիամ Քոչարյանը

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Օրակարգում էր՝

- Հաստատել Ապարան համայնքի ավագանու արտահերթ՝ 2022 թվականի ապրիլի 6-ի նիստի օրակարգը՝

(զեկուցող՝ Կ.Եղիազարյան)

ԼՍԵՑԻՆ.

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՀԱՄԱՐ «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-ԻՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԼԻԶԻՆԳԱՏՈՒ) ԼԻԶԻՆԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԿՈՄՈՒՆԱԼ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ, ԼԻԶԻՆԳԱՏՈՒԻ և «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ի ՄԻՋև ԿՆՔՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ(ԵՐԻ)Ց ԲԽՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԻՄՆԱՐԿ) ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՇՎԱԾ ԲՈԼՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ և ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ**

**- Զեկուցեց Ապարան համայնքի ղեկավարի տեղակալ Հրայր Մկրտչյանը, որ ներկայացրեց, հետևյալը՝**

**Ապարան համայնքի կոմունալ ծառայության աշխատանքները պատշաճ և արդյունավետ իրականացնելու նպատակով խիստ անհրաժեշտություն է առաջացել լիզինգի միջոցով ձեռք բերելու համակցված բազմաֆունկցիոնալ կոմունալ տեխնիկա (ջրող, ցանող, ավլող և հարթեցնող): Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներով.**

***Ապարան համայնքի ավագանին որոշում է.***

1. Ապարան համայնքի տարեկան աշխատանքային պլանում կատարել լրացում՝ ներառելով «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ի միջոցով ձեռք բերել բազմաֆունկցիոնալ կոմունալ տեխնիկա, մասնավորապես՝ բեռնատար մեքենաներ և կցորդիչներ (այսուհետ՝ Գույք)՝ լիզինգի միջոցով և նրա պայմաններին համապատասխան: Գույքը սեփականության իրավունքով ձեռք բերելու պայմանով Լիզինգատուի իրավասու մարմնի կողմից որոշված տոկոսադրույքով և այլ պայմաններով կնքել մինչև 80,000,000.00 ՀՀ դրամ ներառյալ գումարի չափով մինչև 84 ամիս ներառյալ ժամկետով լիզինգի գլխավոր պայմանագիր, լիզինգի գլխավոր պայմանագրի հավելված լիզինգի պայմանագիր և (կամ) լիզինգի պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելու համաձայնագիր (այսուհետ՝ Լիզինգի պայմանագիր) և ստորագրել վերջինիս կնքման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Համաձայնություն տալ լիզինգի գումարի փոփոխմանը լիզինգի գումարի մեջ ներառվող վճարների և ծախսերի չափի փոփոխությամբ, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված, փոփոխված չափին համապատասխան:
2. Գույքի ձեռք բերման համար միջոցները հատկացնել ՏԱՊ ծրագրով նախատեսված մյուս ծրագրերի հնարավոր տնտեսումներից և /կամ/ գերակա շահ ճանաչված հողամասերի արժեքների գանձումների հաշվին:
3. Երաշխավորել Ապարան համայնքի «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ի կողմից Գույքի ձեռք բերման համար և պատասխանատվություն ստանձնել Լիզինգի պայմանագրի բոլոր կետերի ժամանակին կատարման համար:
4. Ի ապահովումն Լիզինգատուի և «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ի միջև կնքվելիք մինչև 80,000,000.00 ՀՀ դրամ

ներառյալ գումարի չափով մինչև 84 ամիս ներառյալ ժամկետով լիզինգի գլխավոր պայմանագրի և լիզինգի պայմանագրի տրամադրել Հիմնարկի երաշխավորությունը, ինչպես նաև կնքել երաշխավորության պայմանագիր և (կամ) երաշխավորության պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելու համաձայնագիր(եր): Համաձայնություն տալ լիզինգի գումարի փոփոխմանը լիզինգի գումարի մեջ ներառվող վճարների և ծախսերի չափի փոփոխությամբ, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված, փոփոխված չափին համապատասխան:

Քննարկման ընթացքում լիզինգային պայմանագրի, փոխարժեքի տատանումների և այլ հարցերի վերաբերյալ ներկայացրեց **«ԱԳԲԱ» ԲԱՆԿ ՓԲԸ Ապարանի մասնաճյուղի կառավարիչ՝ Արմեն Ղազարյանը: Ընդհանուր քննարկումներ և հարցերի փոխանակումներ եղավ ավագանու անդամների միջև:**

**Ավագանու անդամները դրական արձագանքեցին այն հարցին, որ տեխնիկան ներկայումս անհրաժեշտություն է համայնքի համար և ասֆալտապատման աշխատանքներից հետո պետք է իրականացվի անհրաժեշտ խնամք:**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

**Ավագանի՝** **(կողմ- 19)** **(դեմ-0)** **(ձեռնպահ-0)**

**Եղիազարյան Կարեն**
**Կարապետյան Արկադի**
**Մակարյան Վահան**
**Պետրոսյան Գոռ**
**Սեդրակյան Հայկ**
**Կարապետյան Կարեն**
**Ենոքյան Դավիթ**
**Խալաթյան Արթուր**
**Ավդալյան Արարատ**
**Գեղամյան Խաչիկ**
**Մանուկյան Աղաբեկ**
**Երեմյան Աղվան**
**Սահակյան Հովհաննես**
**Մխիթարյան Վարդան**
**Փարվանյան Արթուր**
**Սաֆարյան Սևակ**
**Սարգսյան Սուրեն**
**Սարգսյան Արշակ**
**Կարապետյան Արտյոմ**

**Համայնքի ղեկավար՝** **Կ.Մ. Եղիազարյան**